ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ԾՐԱԳԻՐ
ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑԻ

ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ
(1918 թվականից մինչև մեր օրերը)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2016

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Ա 948

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ պատմության ֆակուլտետի
գիտական խորհուրդը

Կազմեց՝ պատմ. գիտ. թեկն., դոցենտ Ա. Գ. Դարբինյանը

Ա 948 Արցախյան հիմնահարցը (1918 թվականից մինչև մեր օրերը): Ծրագիր մագիստրատուրայի մասնագիտական դասընթացի/ Կազմ.՝ Ա. Գ. Դարբինյան**.** - Եր.: ԵՊՀ հրատ., 2016, 16 էջ:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-5-8084-2070-0

© ԵՊՀ հրատ., 2016
© Կազմողի կողմից, 2016

Նպատակը

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել Արցախյան հիմնախնդրի էությունը և բովանդակությունը, հիմնավորել իր՝ ազատ ինքնորոշման իրավունքով Մայր Հայաստանի կազմում լինելու համար արցախահայության պայքարի պատմական արդարությունը:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը.

1. Կիմանա արցախահայության ազգային-ազատագրական պայքարի պատճառները և նպատակը:

2. Կհասկանա աղբրբեջանական իշխանությունների կողմից արցախահայության նկատմամբ տասնամյակներ շարունակ իրականացված հայատյաց քաղաքականության բովանդակությունը և սեփական ճակատագիրն ազատորեն տնօրինելու համար արցախահայության պայքարի անխուսափելիությունը և անհրաժեշտությունը:

3. Կկարողանա կատարել համապատասխան գիտական վերլուծություններ և վերոհիշյալ հիմնախնդիրներին վերաբերող հետազոտական աշխատանքներ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները:

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է մագիստրանտի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր պատասխանի հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 2 հարց, յուրաքանչյուրը՝ 5 միավոր: Մագիստրանտի հանրագումարային գնահատման առավելագույն արժեքը 20 միավոր է (մասնակցություն 2 միավոր, ընթացիկ քննություններ 8 միավոր, եզրափակիչ քննություն 10 միավոր):

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հիմնահարցի գիտական կարևորության և արդիականության հիմնավորումը:

Օգտագործված աղբյուրների և գրականության քննական վերլուծություն:

ԹԵՄԱ 1. ԱՐՑԱԽԸ 1918-1923 ԹԹ.

Բաթումի 1918 թ. հունիսի 4-ի պայմանագիրը և մուսավաթական Աղրբեջանի ճվաճողական հավակնությունները Լեռնային Ղարաբաղի, Զանգեզուրի ու Նախիջևանի նկատմամբ: Աղրբեջանի ճեռնարկած ռազմական գործողություններն Արցախում: Արցախահայության հերոսական ինքնապաշտպանությունը: Ղարաբաղի հայության համագումարները և նրանց որոշումները (1918-1920 թթ.): Ղարաբաղի Ազգային խորհրդի ստեղծումը և գործունեությունը:

Անդրանիկի զորախմբի 1918 թ. Նոյեմբերի ռազմերթը դեպի Ղարաբաղ և այն ընդհատելու պատճառներն ու գնահատականը: Հայաստանի Հանրապետության ուշացած օգնությունն արցախահայությանը: Դրոյի և Նժդեհի զորաջոկատների մուտքն Արցախ և այնտեղից հեռանալու պատճառները: Լեռնային Ղարաբաղի խորհրդայնացումը:

Խորհրդային Ռուսաստանի երկդիմի քաղաքականությունն այսպես կոչված «վիճելի տարածքների» հարցում:

ՌԿ(բ)Կ Կովկասյան Բյուրոյի 1921 թ. հունիսի 3-ի որոշումը Լեռնային Ղարաբաղի մասին: Խորհրդային Հայաստանի կառավարության 1921 թ. հունիսի 12-ի հրովարտակը Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանի անբաժան մաս հայտարարելու վերաբերյալ: Լեռնային Ղարաբաղի հարցի անօրինական քննարկումը ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի կողմից: 1921 թ. հուլիսի 4-ի և հուլիսի 5-ի իրարամերժ որոշումները: Արցախի անօրինական բռնակցումն Աղրբեջանին. Ստալինի վճռորոշ դերակատարությունը այդ հարցում: 1923 թ. ԼՂԻՄ-ի ստեղծումը և

նրա սահմանների հարցը: Կարմիր Քրդստանի ստեղծումը և Խորհրդային Հայաստանի հետ ԼՂԻՄ-ի ցամաքային կապի վերացումը:

ԹԵՄԱ 2. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ

Արցախահայության ձկատմամբ Խորհրդային Ադրբեջանի իշխանությունների վարած ազգային խտրականության, ճնշման ու հալածանքի քաղաքականությունը սոցիալ-տնտեսական և հոգևոր-մշակութային ոլորտներում:

ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Գր. Հարությունյանի 1945 թ. նոյեմբերի 11-ի դիմումն Ի. Ստալինին՝ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը Հայկական ԽՍՀ-ի կազմի մեջ մտցնելու մասին:

Խորհրդային ղեկավարության առջև ղարաբաղյան հիմնահարցի հերթական անգամ բարձրացումը 1960-ական թվականներին (1962, 1965 թթ.): ԽՄԿԿ ԿԿ-ի 1966 թ. օգոստոսի 8-ի որոշումը ԼՂԻՄ-ի վերաբերյալ: Արցախահայության արդարացի պահանջները նորից փակուղում: Ադրբեջանական իշխանությունների հայահալած քաղաքականության սաստկացումն Արցախում: Արցախի հայաթափման քաղաքականությունը: Ժողովրդագրական պատկերի կտրուկ փոփոխությունները ԼՂԻՄ-ում խորհրդային տարիներին:

Արցախյան հիմնահարցը 1970-ական թվականներին: ԼՂԻՄ մարզկոմի 1-ին քարտուղար Բ. Կնորկովի հակահայ գործունեությունը:

ԹԵՄԱ 3. ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՆՈՐ ՓՈՒԼԸ (1988-1991ԹԹ.)

Գորբաչովյան վերակառուցման քաղաքականությունը և ազգային հարցի սրումը ԽՍՀՄ-ում: Ազգամիջյան հակամարտությունների օջախների առաջացումը երկրում: Ստորագրահավաքն Արցախում (1987 թ.): Արցախցիների պատվիրակությունների մեկնումը Մոսկվա (1987 թ. դեկտեմբեր – 1988 թ. հունվար, փետրվար): Նրանց հանդիպումները կուսակցական և պետական բարձրաստիճան պաշտոնյաների հետ. դրանց արդյունքները: ԼՂԻՄ-ի ժողովրդական պատգամավորների Մարզխորհրդի 1988 թ. փետրվարի 20-ի արտահերթ նստաշրջանի որոշումը՝ մարզը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից դուրս բերելու և Հայկական ԽՍՀ կազմի մեջ մտցնելու մասին: Մարզխորհրդի որոշման վերածումը համաժողովրդական պահանջատիրության:

Զանգվածային հանրահավաքներն ու երթերը Լեռնային Ղարաբաղում, Հայաստանում և Սփյուռքում: «Կռունկ» և «Ղարաբաղ» կոմիտեները ժողովրդական շարժման ղեկավարներ:

Ժողովրդական շարժման բովանդակության ենթագավոխումը ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի և խորհրդային կենտրոնական մամուլի ու այլ ՁԼՄ-ների կողմից: ԽՄԿԿ ԿԿ-ի գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովի դիմումն Ադրբեջանի և Հայաստանի ժողովուրդներին: Սումգայիթյան եղեռնագործությունը: Կենտրոնի կրավորական կեցվածքը հայերի ջարդի նկատմամբ:

ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի 1988 թ. մարտի 24-ի «Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի սոցիալ-տնտեսական զարգացումը 1988-1995 թթ. արագացնելու միջոցառումների մասին» որոշումը: ԼՂԻՄ-ին հատկացված գումարների յուրացումն ադրբեջանական իշխանությունների կողմից: Արցախյան շարժման հետագա ծավալումը:

ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 1988 թ. հունիսի 15-ի նստաշրջանի որոշումը ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ կազմի մեջ մտցնելու մասին: Ադրբեջանի Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանի կողմից ԼՂԻՄ-ի Մարզ-

խորհրդի փետրվարի 20-ի դիմումի մերժումը: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1988 թ. հուլիսի 18-ի նիստը և արցախահայության խնդրանքի մերժումը: Հայերի նոր զանգվածային ջարդերի կազմակերպումը Ադրբեջանում (Կիրովաբադում և այլ հայաբնակ տարածքներում): Նոր բռնագաղթը:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1989 թ. հունվարի 12-ի որոշումը ԼՂԻՄ-ի պետական և կուսակցական մարմինների գործունեության դադարեցման վերաբերյալ: Ա. Վոլսկու գլխավորությամբ Հատուկ կառավարման կոմիտեի ստեղծումը:

Իրադարձությունների հետագա զարգացումը Լեռնային Ղարաբաղում: 1989 թ. օգոստոսի 16-ի ԼՂԻՄ ինքնակառավարման ներկայացուցչական մարմնի՝ Ազգային խորհրդի ստեղծումը: ԽՍՀՄ ԳԽ 1989 թ. նոյեմբերի 28-ի որոշումը՝ Ա. Վոլսկու Հատուկ կառավարման կոմիտեի լուծարման և Հանրապետական կազմկոմիտեի ստեղծման վերաբերյալ (Վ. Պոլյանիչկո): Հայաստանի ԳԽ-ի և ԼՂԻՄ Ազգային խորհրդի 1989 թ. դեկտեմբերի 1-ի համատեղ որոշումը ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ-ին վերամիավորելու մասին: Հայերի նոր ջարդերը Բաքվում (1990 թ. հունվար): Ադրբեջանի ժողովրդական ճակատի գրոհայինների զինված հարձակումները Հայաստանի սահմանների ամբողջ երկայնքով: Հայկական ինքնապաշտպանական ուժերի հակահարվածները թշնամուն:

ԹԵՄԱ 4. ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՋԻՆՎԱԾ ՓՈՒԼԸ (1991-1994 թթ.)

ԽՍՀՄ ՆԳՆ զորքերի և Ադրբեջանի ՕՄՕՆ-ի գործողությունները ԼՂԻՄ-ում: Ինքնապաշտպանական ջոկատների ստեղծումը: «Օղակ» գործողությունը (1991 թ. ապրիլ-մայիս): Գետաշենի և Մարտունաշենի հերոսական ինքնապաշտպանությունը (Թ. Կրպեյան, Ս. Աչիկգյոզյան և ուրիշներ): Գետաշենի, Մարտունաշենի և հայկական 24 այլ գյուղերի հայաթափումը խորհրդային զորքերի և ադրբեջանական ՕՄՕՆ-ի կողմից:

Արցախյան պատերազմի սկիզբը: ԼՂԻՄ-ի լուծարումն ադրբեջանական իշխանությունների կողմից: ԼՂՀ հռչակումը (1991 թ. սեպտեմբերի 2): Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչության անկախության հանրաքվեն (1991 թ. դեկտեմբերի 10): ԼՂՀ իշխանության մարմինների ձևավորումը:

Ռազմական գործողություններն Արցախում 1992 թ. սկզբներին: Քարինտակի հերոսական ինքնապաշտպանությունը: Թշնամական կրակակետերի լռեցումը (Կրկժան, Մալիբեյլի, Ղուշչուլար և այլն): Խոջալուի ազատագրման ռազմական գործողությունը (1992 թ. փետրվար) և դրա ենթագիտակցված գնահատականը ադրբեջանական քարոզչամեքենայի կողմից: Շուշիի («Հարսանիք լեռներում») և Լաչինի ազատագրության ռազմական գործողությունը (1992 թ. մայիս, Արկաղի Տեր-Թադևոսյան «Կոմանդոս»): Հայաստանի Հանրապետության և ԼՂՀ-ի միջև ցամաքային կապի հաստատումը: Շուշիի ազատագրության գործողության ռազմաքաղաքական և բարոյահոգեբանական նշանակությունը, նրա ազդեցությունը ռազմական գործողությունների հետագա ընթացքի և պատերազմում տարած վերջնական հաղթանակի վրա:

Ադրբեջանի լայնամասշտաբ ագրեսիան ԼՂՀ-ի դեմ 1992 թ. ամռանը: Շահումյանի և Մարտակերտի շրջանների ռազմականումը հակառակորդի կողմից: Հայկական ինքնապաշտպանական ուժերի ռազմական անհաջողությունների պատճառները: Պաշտպանական շրջանների և ՊՊԿ-ի ստեղծումը (1992 թ. օգոստոս):

Ռազմական գործողություններն Արցախում 1993 թ.: Հայկական պատմական տարածքների ազատագրումը (Քելբաջար, Մարտակերտ, Աղդամ, Ֆիզուլի, Ջաբրայիլ, Ղուբաթլի, Ջանգելան): Անվտանգության գոտու ստեղծումը ԼՂՀ-ի շուրջ: Ղարաբաղյան բանակի հաղթանակները 1994 թ. (Օմարի լեռնանցքի և այլ տարածքների ազատագրումը): Զինադադարի ստորագրումը (1994 թ. մայիս):

2016 թվականի ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերն ադրբեջանի լայնամասշտաբ ագրեսիան ԼՂՀ-ի նկատմամբ: ԼՂՀ պաշտպանական բանակի հերոսական ինքնապաշտպանական մարտերը և հակահարվածը թշնամուն: Քառօրյա պատերամի հետևանքները և դասերը:

Սփյուռքահայության մասնակցությունը արցախյան ազատագրական պատերազմին: Սփյուռքում գործող հայ ավանդական կուսակցությունների աջակցությունն արցախահայության գոյամարտին:

ԵՊՀ-ն արցախյան գոյապայքարում:

Արցախյան ազատամարտի հերոս-նահատակները (Թ. Կրպեյան, Մ. Մելքոնյան, Ա. Ղուլյան (Բեկոր), Շ. Մեղրյան, Լ. Ազգալդյան, Պ. Ղևոնդյան, Վ. Ստեփանյան (Դուշման), Վ. Բախշյան և ուրիշներ):

ԹԵՄԱ 5. ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

Արցախյան հիմնախնդիրը միջազգային ատյաններում (ԵԱՀԽ, ՄԱԿ, ԵՄ և այլն): Տարածքային ամբողջականության և ազգերի ազատ ինքնորոշման իրավունքի սկզբունքները՝ որպես միջազգային ատյաններում Ղարաբաղյան հիմնախնդրի քննարկման ելակետային դրույթներ: Միջնորդական առաքելությունները ԼՂՀ-ի հարցի կարգավորման գործընթացում: ԵԱՀԽ Մինսկի խմբի ձևավորումը (1992 թ. մարտ): ԵՀԱԿ Բուդապեշտի (1994թ.) և Լիսաբոնի (1996 թ.) գագաթնաժողովների որոշումները Արցախյան հիմնախնդրի վերաբերյալ:

Հիմնախնդրի կարգավորման ձևաչափերի (փուլային, փաթեթային, ընդհանուր պետություն) վերաբերյալ արված առաջարկությունները և դրանց նկատմամբ հակամարտող կողմերի դիրքորոշումները: Բանակցային գործընթացը Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության նախագահների միջև: ԼՂՀ-ի՝ որպես բանակցային կողմ ճանաչելու անհրաժեշտությունը: Քի Վեստի 2001 թ. փաստաթուղթը: ԵԱՀԿ Մինսկի խմբի կողմից հարցի խաղաղ կարգավորման վերաբերյալ 2007 թ. առաջարկված և 2010 թ. նորացված մադրիդյան սկզբունքները: Հակամարտող կողմերի դիրքորոշումները ներկայացված տարբերակների վերաբերյալ:

ՌԵՖԵՐԱՏՆԵՐԻ ԹԵՄԱՆԵՐ

1. Արցախյան հիմնախնդիրը 1918-20 թթ.:
2. ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի պլենումի 1921 թ. հուլիսի 4-ի և 5-ի իրարամերժ որոշումները: Արցախի անօրինական բռնակցումն Ադրբեջանին:
3. ԼՂԻՄ ստեղծումը 1923 թ. հուլիսին: Ինքնավար մարզի սահմանների հարցը:
4. Արցախյան շարժման նոր փուլը (1988 թ. փետրվար-հուլիս):
5. Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը (1989 թ. դեկտեմբերի 1 - 1991 թ. սեպտեմբերի 2):
6. Շուշիի և Լաչինի ազատագրության ռազմական գործողությունները (1992 թ. մայիս):
7. Ռազմական գործողությունները Արցախում 1992 թ. ամռանը: Շահումյանի և Մարտակերտի անկումը:
8. Ռազմական գործողությունները Արցախում 1993 թ.: Հայկական պատմական տարածքների ազատագրումը:
9. Ռազմական գործողությունները Արցախում 1994 թ.: Մայիսյան զինադադարը:
10. Արցախյան հիմնահարցի միջազգայնացումը: ԼՂՀ-ը հիմնախնդիրը միջազգային ատյաններում 1992-1998 թթ.:
11. ԼՂՀ-ը հիմնահարցը միջազգային ատյաններում 1998 թ. մինչև մեր օրերը:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ՍԿԶԲՆԱԴԲՅՈՒՐՆԵՐ

1. ԼՂՀ ազգային ատլաս, Երևան, 2009:
2. Ստուպիշին Վ., Իմ առաքելությունը Հայաստանում 1992-1994 թթ., Հուշեր, Երևան, 2005:
3. Арцах-Карабах. Библиография на русском языке (1988-2010 гг.). Составители Симонян А., Бабаян Э., Ереван, 2011.

4. Манасян А. С., Карабахский конфликт. Международно признанные основания проблемы. (Папка правовых и политических документов), Степанакерт, 2007.
5. Нагорный Карабах в 1918-1923 гг. Сборник документов и материалов. Отв. редактор В. Микаелян, Ереван,1992.
6. Нагорный Карабах и вокруг него. Глазами независимых наблюдателей. Сборник документов. Составители С. Золян, Г. Мирзоян, Ереван, 1991.
7. Нагорный Карабах. Разум победит. Документы и материалы, Баку, 1989.
8. Правда о Нагорном Карабахе. Материалы и документы, Ереван, 1989.
9. Самооборона армян Кировабада в 1988-1989 гг. Глазами очевидцев. Сост. Г. Оганезов, Г. Харатян, Ереван, 2014.
10. Статус Нагорного Карабаха в политико-правовых документах и материалах, Ереван, 1995.
11. Сумгаит... геноцид... гласность? Составители Г. Улубабян, С. Золян, Ереван, 1990.
12. Сумгаитская трагедия в свидетельствах очевидцев. Отв. редактор С. Шахмурадян, Книга 1, Ереван, 1989.

ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Հ. Մ., Լեռնային Ղարաբաղը 1918-1921 թթ., Երևան, 1991:
2. Բալայան Վ., Արցախի պատմություն, Երևան, 2011:
3. Իշխանյան Ե., Լեռնային Ղարաբաղը 1917-1920 թթ., Երևան, 1999:
4. Հարությունյան Մ. Ա., Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, Երևան, 2000:
5. Հարությունյան Վ. Բ., Արցախ, հիմնահարցի ակունքները, Ստեփանակերտ, 1998:
6. Հովսեփյան Յու., Հայերի ցեղասպանությունն Ադրբեջանում. 1918-1990, Հայոց ցեղասպանություն, պատճառներ և դասեր, մաս 2, Երևան, 1995, էջ 5-29:
7. Խաչատրյան Հ., Ղազարյան Գ., Մարգարյան Ս., Հաղթանակներն ինչպես եղել են, Ազդականչ 44, Երևան, 2008:

8. Ղարաբաղյան ազատագրական պատերազմը. 1988-1994 թթ.: Հանրագիտարան, Երևան, 2004:
9. Ղահրամանյան Կ., Հյուսիսային Արցախ. գոյության պայքար, Գիրք Ա-Բ, Երևան, 1993:
10. Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարը, հ.Ա, Երևան, 1994:
11. Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Երևան, 1997:
12. Анексия и депортация, Степанакерт, 1998.
13. Арутюнян В. Б., События в Нагорном Карабахе, ч. 1, Ереван, 1990, ч. 2, Ереван, 1993, ч. 3, Ереван, 1993, ч. 4, Ереван, 1994, ч. 5, Ереван, 1997, ч. 6, Ереван, 1997.
14. Барсегов Ю., Право на самоопределение-основа демократического решения межнациональных проблем: к проблеме Нагорного Карабаха, Ереван, 1989.
15. Геноцид армян в Азербайджане, Степанакерт, 1989.
16. Золян С., Нагорный Карабах: проблема и кофликт, Ереван, 2001.
17. Кокс Керолайн, Айднер Джон, Этническая чистиа продолжается. Война в Нагорном Карабахе, Ереван, 1998.
18. Нагорный Карабах. Историческая справка, Ереван, 1988.
19. Тарасов С. Н., Мифы о карабахском кофликте., М, 2012.
20. Хуршудян Л. А., Истина-единственный критерий исторической науки, Ереван, 1989.

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ալվրցյան Հ., Ընդդեմ Ադրբեջանի հայատյաց քաղաքականության, Երևան, 2007:
2. Ավետիսյան Հր., Հայոց ազգային միասնության հաղթանակը, Երևան, 1998:
3. Արշակյան Ա., Արցախյան գոյապայքարը (1985-1992 թթ.), Երևան, 2004:
4. Բալայան Զ., Դժոխք և դրախտ, Երևան, 1995:
5. Գևորգյան Հ., Պետոն, Երևան, 2000:
6. Կարապետյան Բ., ... Եվ նրա շուրջ, Երևան, 1992:

7. Հայաստանը փոխակերպվող աշխարհում, Երևան, 2006:
8. Հասրաթյան Ս., Սաղումյան Ս., Գաղափարի զինվորը, Երևան, 2006:
9. Հարությունյան Հ. Մ, Լեռնային Ղարաբաղը 1918 -1921թթ., Երևան, 1991:
10. Մելքումյան Ս., Արցախ, Ղարաբաղ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, Երևան, 2011:
11. Մովսեսովա Տ., Հովնանյան Ա., Բաքվի ջարդերը, Երևան, 1992:
12. Մովսիսյան Ն., Մարտնչող անմահություն, Երևան, 1997 թ.:
13. Պետրոսյան Ա., Արթուր Սկրտչյան, Երևան, 2004:
14. Պետրոսյան Ա., Մեծն Շահեն, Երևան, 2011:
15. Սահակյան Ռ., Արծվապաշտ երկիր, Երևան, 2004:
16. Սողոմոնյան Ն., 1991 «Կոլցո», (Մարդորսություն), Առաջին մաս, Ստեփանակերտ, 1994, «Թեժ կետեր», Երկրորդ մաս, Ստեփանակերտ, 1995:
17. Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը, Սկզբից մինչև մեր օրերը, Երևան, 1994:
18. Օհանջանյան Փ., Ղարաբաղի ազատագրական պատերազմը, Երևան, 2000:
19. Азербайджанская аргументация и её опровержение, Ереван. 1989.
20. Балаян И., Армения и Нагорный Карабах на политической сцене мира. Ереван, 1995.
21. Манасян А.С., Карабахский конфликт. Ракурсы правового подхода, Ереван,1998.
22. Мелик-Шахназарян Л., Военные преступления Азербайджана против мирного населения Нагорно-Карабахской Республики, Ереван,1997.

Բովանդակություն

Նպատակը 2
Կրթական արդյունքները..... 3
Ներածություն..... 4
Թեմա 1. Արցախը 1918-1923 թթ..... 4
Թեմա 2. Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը խորհրդային
Ադրբեջանի կազմում 5
Թեմա 3. Արցախյան շարժման նոր փուլը (1988-1991թթ.)..... 6
Թեմա 4. Ազգային-ազատագրական պայքարի
զինված փուլը (1991-1994 թթ.) 7
Թեմա 5. Արցախյան հիմնախնդրի միջազգայնացումը
Ռեֆերատների թեմաներ 9
Աղբյուրների և գրականության ցանկ սկզբնաղբյուրներ 10
Հիմնական գրականություն..... 11
Լրացուցիչ գրականություն 12

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ԾՐԱԳԻՐ
ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑԻ

ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ
(1918 թվականից մինչև մեր օրերը)

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Հրատ. սրբագրումը՝ Գ. Գրիգորյանի

Չափսը՝ 60x84 $^{1}/_{16}$: Տպ. մամուլը՝ 1:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1